Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

2026-01-30 17:50:47

Հայտատու	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան
Տեսակ	Ծանուցումներ

Գործ ԵԴ2/12294/02/25 Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ ՄՎկա Հովհաննես Կարլենի Կարապետյանին՝Հասցե՝ՀՀ, ք.Երևան, Րաֆֆու փողոց, շենք 115, բն 3Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) վարույթում է գտնվում թիվ ԵԴ2/12294/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի Սիաբանդ Միարի Ավանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարան՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականութան իրավունքը ճանաչելու պահանջի մասին։Թիվ ԵԴ2/12294/02/25 նախնական դատական նիստը նշանակվել է 19.02.2026 թվականին, ժամը 11:30-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայրում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան փողոց, թիվ 41ա)։Դուք հրավիրվում եք նախնական դատական նիստին որպես վկա։ Անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով։ Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝1. Վկան պարտավոր է դատարանի կանչով ներկայանալ առաջին ատյանի դատարան։2. Դատական ծանուցագիր ստացած և դատական նիստին ներկայանալու հնարավորություն չունեցող վկան պարտավոր է մինչև դատական նիստն այդ մասին հայտնել առաջին ատյանի դատարանին՝ նշելով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառները։ 3. Եթե դատական ծանուցագիր ստացած վկան չի ներկայանում դատական նիստին և չի ներկայացնում իր չներկայանալու պատճառները կամ ներկայացնում է անհարգելի պատճառներ, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում վկային բերման ենթարկելու մասին՝ նրա վրա դնելով չներկայանալու հետևանքով առաջացած ծախսերը և նշանակելով դատական տուգանք։ Բերման ենթարկելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն առաջին ատյանի դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման։4. Որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։ ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

+374-10-547915

Հայաստան, Երևան, Տիգրան Մեծի պող., 23/1 շենք